

## ԷՄԻԼ ԶՈՒԱՆ ԵՒ ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄԸ \*)

Յրանսիական ազգին միշտ յառաւել է եղել հասարակութան ըստ երեսոյթին մի աննշան դէպքից հանել ամենախոշոր հետեւանքներ և ընդհանրացումների ընդունակ մոքի հզօր կարողաւթեամբ հասնել փիլիսոփայական-բարոյական խորիմաստ ու կճասական եղբակացութիւններին Այզպիսի դէպքերից մէկն եղաւ Դրէյֆուսի գործը, մի զուտ զատական գործ, որով սակայն ամբողջ աշխարհն զրազուեց և որի բազմապիսի հետեւանքները դեռ մինչեւ այսօր շարունակում են յուզել ոչ միայն Յրանսիայի հասարակական կենանքը, այլ և անցնելով նրա սահմաններից հարեւան երկրներում նման յուզմունքներ են առաջ բերում

Տարբիների ընթացքում ֆրանսիական բուրժուա հասարակութեան ծոցում բուն զրած ախտաերի, մութ զօրծոզութիւնների մի մահարեր կուտակումն էր, որի վրայից Դրէյֆուսի գործը ելաւ յետ քաշելու փայլուն քօղը, մի պարար, որի մէջ նա մինեց ուուր նշարակը։ Հասարական այդ խոշոր երեւոյթի մէջ Զօլան այնպիսի մնած զեր է խաղացել, որ նրա բարոյական պատկերն ամբողջաշնուր համար անկարելի է լուսթեան տալ այդ մնած խորի ծագումը և նրա յաջորդական զարգացման դիսաւոր մօմենտներն ու հետեւանքները



Աշմիլ Զօլան և Նատուրալիզմը վերնագրի տակ գուցէ տարօրինակ համարուի խօսել մնած զրոյի վերջին տարբիների կենաքի աղմբայոյզ շրջանի մասին, բայց բանն այն է, որ այդ ժամանակ էլ Զօլան հաւատարիմ մնաց իր նատուրալիստական ուղղութեանը, որ պահանջում էր ամենից տառաջ ճշմարտութիւնը ամեն տեղ և ամեն բանում անկախ տիրող հասկացու-

\*) Եարան, տես. «Մուրճ» № 10.

Դութիւններից, իշխող մօրալի պահանջներից, ազգային փափկա-  
նկատումներից։ Այստեղ էլ նա մնաց, եթէ կարելի է այսպէս  
ասել, նատուրալիստորէն ճշմարտութեան զինուոր։ Աւելորդ է  
այստեղ վերստին ներկայացնել Դրէյֆիւսի գործը՝ հռչակաւոր  
L'affaire-ը, մանրամասնաբար։ Դա այնքան յայտնի է արդէն։  
Հարցը մօտաւորապէս հետեւեան էր։ Դատապարտուած էր մի  
սպա յանցանքներից վատագոյնի՝ դաւանանութեան համար։  
Ամբողջ Ֆրանսիան գտնում էր այդ դատն արդար, Զօլան  
գտաւ անարդար, անտագօնիզմը զարհութելի էր, մի մարդ՝ մի  
ամբողջ ազգի դէմ երևը հզօր դասակարգերի՝ կղկրականու-  
թեան, բուրժուազիայի և զինուորականութեան ներկայացու-  
ցիչներն ընդունեցին մարտահրաւէրը, որ Զօլան ձգեց նրանց իր  
ութ Յ'accuse-ներով։

«Ես չեմ ճանաչում այն մարդկանց, ասում էր Զօլան,  
որոնց մեղաղրում եմ, նրանց երբ չեմ էլ տեսել, ևս նրանց դէմ  
չունեմ ոչ քէն, ոչ ատելութիւն... ես միայն մի հատիկ բուռն  
ունեմ, լոյսի տենչը և այն յանուն մարդկութեան, որ  
այնքան տառապել է և որ իրաւունք ունի երջանիկ լինել։ Իմ  
կրակոտ բողոքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ իմ հոգու ճիչը։ Թող  
սիրտ անեն ինձ դատարանի առաջ հանել, և թող քննութիւնը  
տեղի ունենայ օրը ցերեկով։»

Ո՞վ ունէր իր հետ Զօլան, համարեա ոչ ոք, հազիւ մի  
քանի սօցիալիստներ, սրանցից մնացածները գտնում էին, թէ  
չարժէ Դրէյֆիւսով զբաղուել, որովհետեւ նա մի բուրժուա է,  
Զօլան նրանց պատասխանում էր՝ նա մի մարդ է։

Եւ Զօլան մեն մենակ մի ամբողջ ժողովրդի, նրա հզօր  
դասակարգերի դէմ գլուխը չը կախեց, չը շիկնեց։ Ամբոխը նրա  
վրայ քարեր էր նետում ճշալով՝ Zola à la potence. Կուրուցած  
դատարանը նրան սկլրում լսել էր կամենում և անողորմ էր,  
մոլորուած երիտասարդութիւնը, քաղաքական փարիսեցութեամբ  
խարուած ուսանողութիւնն անգամ մնչում էր նրա լուսա-  
մուտների տակ բառնցքները սղմած, բանակը մոմոռում էր, շա-  
տերն սպասնում էին Զօլային Սենա գետում խնդրել, բայց նա  
շարունակում էր աղաղակել ամբողջ աշխարհի առաջ՝ «La vérité,  
toute la vérité!» ճշմարտութիւնը, ամբողջ ճշմարտութիւնը.  
Կրակոտ դիմումներով, նամակներով ու կոչերով նա աշխատում  
էր սպած խզների մէջ արդարութեան և ճշմարտութեան կայծը  
վառել, և մոլորուած հոգիներին իր դատի բոլոր վեհութիւնը  
պարզել։

«Ո՞ւր էր գնում դուք ով երիտասարդներ, ասում էր Զօ-  
լան իր Lettre à la jeunesse-ում, ուր էր գնում, ուսանողներ,

դուք որ խմբերով վազում եք փողոցներում յանուն ձեր զայրայիթ և ձեր սպառութեան յայցեր անելով. Ձեր պրոցուած խզի աղաղակը բարձրացնելու անյազմելի պահանջից մզւած... զնում էք դուք արդեաք ուզգելու մի հասարակական անորդարաւթիւն. Ձեր թաթուան երիտասարդութեան բողոքը զնելով կենքի անհաւասար թաթի մէջ, ուր աշնչէս խարերայորէն ձգուած են երջանիկների և այս աշխարհի խորի զաւահների բազգը:

—Ոչ, ոչ, մենք զնում ենք անորդելու մի մարդ. պատուանում էք Զօլան Նրանց կողմից, մի ծերունի, որ աշխատանքի և շխտուի ընթացքի մի երկար կեանքից յետոյ երեւակայի է. թէ նա կարող է անպատճէ կերպով պաշտպանել մի ազնիւ զատ, ցանկանալ որ լոյսը յայտնուի. որ մի սիսոյ ուզգուի, նոյն-իսկ Ֆրանսիայի պատուի համար. Երիտասարդութիւն, երիտասարդութիւն. արդարազառաթեանը եղիր կաւակից... ազնիւ և մարդասէր եղիր, ով, եթէ ոչ զու պիտի փորձեա զնում արկածը ձգուելով մի արդար և զնում զատի մէջ, զէմ զնելով մի ամրողջ ժողովրդի՝ արդարութեան իցէալի անունով։ Պատութեան մէջ չը տեսնուած օրեք էին, մի հատիկ մարդ, մի ծերունի. մի ամրողջ ժողովրդի զէմ, զու մի զարհուրեկի մենամարտ էր, որ տեւեց ամրողջ երկու տարի տակն ու վրայ անելով ամրողջ Ֆրանսիան, հերին պահելով ամրողջ աշխարհը. և վերջ ի վերջոյ յաղթանակողը Զօլան եղաւ, ի պատիւ այդ Մեծ Ֆրանսիայի, որի արդարասէր խիզձը կարող է մթազնել, բայց բթանալ ու մեռնել՝ երրէք! Բննի զատը. Դրէյֆուսի զէմ արձակած իր զատապարտող վճռով անզամ մի հերքումն եղաւ նախորդ անարդար զնոփի, նա վկայեց միեւնոյն ժամանակ Զօլայի պաշտպանած զործի բոլոր ճշմարտութիւնը։

\* \*

Այս բոլորից յետոյ այնուամենայնիւ ինքն բոտ ինքեան հարց է ծագում, թէ իսկապէս ինչումն է կայանում Զօլայի կատարած զործի մնանքինը, ուր պիտի վնտուել այդ ահազին, համախմարհային հետաքրքրութեան և ազմուելի ազրիւրը, որ պատճառեց L'affaire-ը։

Մի մարդ զատապարտուած էք անարդար կերպով. Զօլան իր անունով, իր զօրեղ զրչով օժանդակեց, որ նրա անմեղութիւնն ապացուցուի, որ նա ազատուի, ճիշտ այնպէս՝ ինչպէս Վոլտերը 18-դ դարում ապացուցեց մի այլ անմեղ զատապարտուածի՝ Ժան-Կալասի անմեղութիւնը. Եւ ինչ տարրերութիւն կայ Զօլայի արածի և այն մարդու վարմունքի մէջ, որ տեսնելու

լով մի ուրիշին գետի մէջ խեղտուելիս շատապում է շուան է ձգում և նրան հանում է ջրից, թէ մէկ և թէ միւս գէպքում հարցը մի մարդի, մի կեանքի փրկութեան մասին չէ, ինչու ուրեմն մէկի շուրջն այսքան աղմուկ, այսքան իրարանցում, այսպիսի համաշխարհային հետաքրքրութիւն։ Ահա այս հարցերին մնաք կ'աշխատենք պատասխանել, և դրանով էլ միաժամանակ կը պարզուի Զօլայի կատարած դերի բոլոր մեծութիւնը։

Մարդկային հասարակական կեանքում շատ անգամ ամենանշան երեւոյթներ պատճառ են դառնում ամենախոշոր ցույցումների իրանց անսպասելի հետեւանքներով։ Մի որեւ է գէպք, որ ինքն ըստ ինքնան միանդամայն աննշան է, որ յայտնի իրականութեան երեւոյթների զլթայից դուրս՝ համարեա ոչ մի առանձին հասարակական կարեւորութիւնն չունի, յանկարծ երեւան է զալիս այնպիսի պայմաններում, ծագում է առնում այնպիսի պատճառներից, կապուած է լինում այնպիսի գործօնների հետ, որ դառնում է մի տեսակ ազդանշան, մի մարտահրաւեր տիրող այս կամ այն կացութեան հետ։ Առանձին մի երեւոյթ, մի գէպք, որի ընդհանրացումը (généralisation) արամարանօրէն հնարաւոր է ու ծշմարտապատում, որ մի տեսակ սինուել է բազմաթիւ այլ նման երեւոյթների, միշտ ընդունակ է լայն ծաւալով շարժումն առաջ բերել և հասարակական ամբողջ կազմի հմբերը ցնցել։ Դրէյֆիւսի գործը այդ տեսակի մի գէպք էր, որ Ֆրանսիայի ժամանակակից հասարակութեան ամբողջ ցանցի մէջ էր ինձուած, և նրան ձեռք տուողը միաժամանակ և ճակառագրաբաէս դիպչում էր իշխող մօրալին, զասակարգային գանազան շահերին, ընթացիկ հասկացողութիւններին, աղգային աւանդութիւններին։

Սնչուշտ Զօլան շատ լաւ գիտէր այդ ինդքի տուածնակարգ հասարակական նշանակութիւնը և նրանից սպասելիք հետեւանքները, երբ վճռեց թողնել իր գրողի աշխատանոցը և հրապարակ նշանակութիւնը կարտի գրայ դնելով իր ամբողջ կեանքը, բարի անունը, պատիւը և յանձն առնել այնքան տանջանքներ, այնքան հալածանքներ։

Եթէնի զինուորական գատարանի վճոից յետոյ, որով ինչպէս յայտնի է Դրէյֆիւս կանխամտածուած կերպով, զատական կեղծիքներով տասն տարով կրկին զատապարտուեց, Զօլան «Le cinquième acte» (հինգերորդ գործողութիւն) վերնադրով մի յօշ դուած հրատարակեց այդ անսպասելի վճռի գէմ, որը, ինչպէս նա իրաւացի կերպով նկատեց, արդարադատութիւն չէր, այլ մի տեսակի փախուստ ծշմարտութիւնը չասելու։ և զինուորական զատա-

բանը վարկագուցի շանելու համար Այս նշանաւոր յօդուածայի Զօրան կատարուած փաստը, Բնննի զատագիրով համարում է զրամայի շորրորդ զործողութիւն, բայց որպէսուեւ Գրանդիան զրամաները միշտ հինգ զործողութիւնից են լինում, Զայս հարցնում է՝ «Ի՞ննի զատաստածը շորրորդ զործողութիւնն է, Տէր Աստուած, բայց անձնում է նա, որը կը լինի իմ զերորդը, սրպիսի շատերից, սրպիսի նոր առնձնանքներից նու կազմուած պիտի լինի... որովհետեւ պարզ է, որ անձնոց չի կարող երկու անզամ զատապարտուել և որ մի այդպիսի լուծումը կարող է մարել արեգակը և ուզի հանել մոզագործները։ Հինգերորդ զործողութիւն տակելով Զօլան հասկանում էր Դրէջֆիւսի վերջնական արդարացումը, այսպէս առած նրա հենաբիլիտաց-ը, մի բան որ կարող է անզի ունենալ, և որին հաւատում են շատ դրէջֆիւսականներ, բայց իսկապէս կարելի է տեսէ, որ այժմ արդէն այդ հինգերորդ զործողութիւնն սկսուած է Ֆրանսիայում և դա Դրէջֆիւսի վերջնական արդարացումը չէ, — նա բարոյապէս արդար է ճանաչուած ամրող աշխարհից — այլ այն առաջնակարգ հասարակական պրորիների լուծումը, որոնց առաջ մզեց L'affaire-ը, և որոնք այնպէս տակն ու վրայ են անում ֆրանսիական ժողովրդի ներքին կեանքը։

\* \*

Ծնորհիւ Զօլայի Դրէջֆիւսի զործը հրապարակ հանեց մի ամրող կօալիցիա հակաղեմօկրատիկական, հակահանրապետական ոյժերի բաղկացած պահպանողական մրանսիայի բոլոր ֆրակցիաներից։ Դուրս եկաւ, որ նացիոնալիստ, անտիբեմիս, կղերական, արքայական անունների տակ զործող կուսակցութիւններն իրանց ուրօյն ու անկախ զործունէութեան տակ թագանուում են տիրող բեմիմի դէմ, մնե յնպափոխութեան պրինցիպների դէմ, «Մարզի և քաղաքացու իրաւունքների» դէմ մի կողմակերպուած ամրողութիւնն, որ իր անազին ճիւզաւորութիւններով ինչպէս մի հազարզլիսեան հիջրա մօս է խեզզելու այն բոլորը, ինչ երրորդ հանրապետութիւնը ձեռք է բերել այնքան զռնաբերութիւններով, այնքան դառն փորձերից յետոյ։ Յայտնուեց, որ կղերականութիւնը, պահպանողականութեան այդ կազմակերպուած բանակը, ազատ մարի, դեմոկրատիայի այդ անձանձիր ու եռանզուն ախոյեանը իր ձեռքի տակ եղած անազին նիւթական և բարոյական միջոցներով աշխատում է, թունաւորել նոր սերնդի մաքերը և էլի մի անդամ «Դեկանմիքեր 2-պատրաստել»։

Այս յայնանութիւնը Դրէջֆիւսի զործի ուրիմի և անուզզակի

կերպով Զօլայի և իր մարդակիցների ամենախոշոր ծառայութիւնը եղաւ Երրորդ հանրապետութեանը, կարելի է ասել, որ Լուրէի ընտրութիւնը, Վալեէկ-Ռուսասօհ «հանրապետական պաշտպանութեան մինիստրութիւնը», Նրան հետեւող բարձրագոյն դատարանի վճռով՝ նացիոնալիստ—անտիսեմիտներին աքսորելը, կղերականութեան դէմ սկսած շարժումը, կրօնական միաբանութիւններին վկրաբերեալ օրինազիծը, զօրքի բարձր զեկավարների դէմ ձեռք առած միջոցները ամենասերտ առընչութիւն ունին Դրէյֆիւսի գործի հետ, Նրանից ծագում առած, Նրանից մղումն ստացած խոշոր հասարակական երեսյթներ են, Զօլայի ակնարկած դրամայի հինգերորդ գործողութեան բազմապիսի յնցեղումներն են: Կոմքի բաղիկալ մինիստրութիւնը շարունակում է ամենաանողորմ վճռականութեամբ այն, ինչ սկըսել է իր նախորդը: Յետագիմական, մութ, վկասակար ոյժերի մի կատարեալ ջախչախումն է կատարեւում այսօրուայ Ֆրանսիայում, զանու, մաքրելու մի ամբողջ հետեւողական ծրագիր է իրագործում, հանրապետական-դեմոկրատիկական կարգերի վկրծնական հաստատութեան, կատարեալ յաղթանակի համար: Ահա թէ ինչ հետեւանքներ ունեցաւ Դրէյֆիւսի գործը Ֆրանսիայի համար, և ահա թէ ուր պիտի փնտռել այդ հարցին տուած առաջնակարգ կարեւորութիւնը:

Զօլան իր օրինակով Վոլտէրից յետոյ եկաւ բողոքելու գիտական այն չոր, կարելի է ասել, անսիրտ միակողմանիութեան դէմ, որ թոյլ է տալիս այս կամ այն զիտնականին, գրողն, մտածողին, փակուել իր կարինեատում, խուլ մնալ զրաից լսուող ձայնների առաջ, չը տեսնել իր շուրջը կատարուածները և այս բոլորը դարձեալ յանուն զիտութեան, յանուն իբր թէ մարդկութեան ապագայ գերագոյն շահերի: Զօլան ցոյց տուեց, որ դէպքեր կան, խոշոր չարիքներ կան կեանքի, երբ ոչ ոք չը պէտք է լոի, չէ կարող լոել առանց մարդկութեան դէմ յանցանք, Lèse humanité գործելու: Ապագայ դրախտը ոչինչ չարժէ, երբ նրա պատրաստողները արհամարհում են ժամանակակից ցաւերն ու արցունքները:



Թէ որքան մեծ է Զօլայի տուած հարուածը Ֆրանսիայի յետագիմանան ոյժերին, թէ ինչքան խոշոր եղաւ Նրա առաջքերած աւերիչ ցնցումը պահպանողական բանակի շարքերում, ապացուցանում է այն ստորացուցիչ, այն ամօթալի կատաղութիւնը, որ նացիօնալիստների օրգանները թափեցին Նրա դադաղի շուրջը:

Չորսնինց առքի կուտակուած մազդ ու թայն էր. որ թշուամբներն շատագեցին զարք թափել այն մարզու մանուան առթիւ, որ երեսուն առքուայ ընթացքում Ֆրանսիայի մարմանի վրայ նրանց ձեւացրած պարարի մէջ իր առք նշարտավին էր կոփել իր յանդուազն ։'accuse-ներով. Աւս թէ ինչ էր զրում պահպանազակն «Libre Parole»-ում անտիսեմիտ Դրիման. Թմէ կենացի ամենապարարից պատարութիւններից մէկն եղաւ. Զօլայի մահուան լուրը... ամբոխներն պայմանող այս մարզու մասնակցութիւնը Դրէշիւսի զարծում առելութեան փոխեց այն հակալրութիւնը, որ մաքուր ընտարութիւնները զզում էին զևսի այս պատեզութիւններ կազմապարովը... Նա միայն մի անգամ է թողել իր աշխատանքները և այն մի զարժելի զաւանան պաշտպանելու համար... և այն ժամանեն, երբ ամեն կոզմ Շաշուամ են հեծեծանքներն ու հառաջանքները այն սուրբ ազգինների (քոյրերը) որոնց շարատում են փողոց. մարզիկ զնում են պատուելու թաղումը այն անձի, որ ցաւի մէջ միայն ախրութիւն և յաւանաւութիւն տեսաւու.

Մի ուրիշ պահպանողական թերթ Gaulois-ն զրում էր Զօլայի մահուան առթիւ. ևնա մեզ շատ շարիք պատճառց և պատմութեան մէջ, եթէ միայն նա այստեղ ընկնի, նա կը նկատուի որպէս կարապիւ այն վաստ մարդկանց. որոնք մեզ կառավարում են այսօրց:

Բայց ինչ արժէք ունեն այսպիսի անարդ վիրաւորանքները այն հայկապ տեսարանի առաջ, որ ներկայացրելով Զօլայի յուղարկաւորութիւնը Աշխատաւորների, կենանի անողուած զմուռութիւնների ծանր ընանց ուսին կրոզների, ինչպէս նրանց վիճակով զրազուած բոլոր ազնիւ զլուխների մի անգին բազմութիւն, հարիւր հազարի համուզ մի ամբոխ հետեւում էր պահների դէղերի մէջ կորած այն պակասին, որ տանում էր «Ժերմինալի», «Աշխատանքի», «Բեզմաւորութեան», «Ճշմարտութեան» հեղինակի զիակը. Այդ յուղարկաւորութիւնը իսկապէս աշխատաւորների, արդարութեան և ճշմարտութեան ծարաւինների մի տօն է եղել, մի յաղթանակ, իրաւունք ունէր ժօրիս երբ զրում էր. «Դեռ ժերմինալը զրելիս, Զօլային երեւաց պրօլետարիան, որպէս մի մեծ ոյժ, մռայլ ու խորը, որ պիտի բարձրանար կամաց-կամաց և տեղ զրաւէր լոյսի առաջ, Եւ այժմ նա վնասում էր «Աշխատանքի» և «Ճշմարտութեան» մէջ և թէ ինչպէս այս նոր և անսահման ոյժը կարող կը լինի կազմակերողուել առանց միեւնոյն տեղում սառելու, և պահպանել նոր կարգերում կենանի շարժունութիւնը և աշխոյժը. Մեծ և սինդակազմ աշխատաւորը դաւանան մահու հա-

բուածն ստացաւ, նախ քան նա կը կարողանար վերջացնել իր ամբողջ գործը, նա չի տեսնի արդարադատութեան կատարածը, որ նա չէր դադարում յուսալ և ճշմարտութեան զրաման, որի մէջ նա եղաւ մի հզօր գործող, սպասում է դեռ, ինչպէս ինքն ասում էր, «վերջին գործողութեանը»:

Եւ բոլոր նրանք, որոնք վեմ հաւատն ունեն դէպի արդարութեան և ճշմարտութեան յաղթանակը, սոյոր նրանք, որոնք աշխատանքի նույիքագործող խորհուրդը գիտեն, գլխակոր և տիսուր պատկառանքով հետեւում էին մեծ քաղաքացու ածիւնին դէպի նրա յաւիտենական բնակարանը: Այստեղ, մահուան հովանու ներքոյ, որ լոեցնում է կրքերը, և իրերի ու երեւոյթների վրայից յետ է քաշում արուեստականութեան, չարամտութեան, նախանձի, կուրացնող կրքերի քողը, այստեղ Զօլային վերջին գնահատութիւնը տուեց ժամանակակից Ֆրանսիայի ամենաընտիր բանաստեղծական փիլիսոփայական միավը՝ Անատոլ Ֆրանս—իրան յատուկ հմայիչ ոճով:

«Զօլան, դեռ երիտասարդ օրերից, ասաց Անատոլ Ֆրանս, տիրապետել էր փառքը. խաղաղ և անուանի, նա վայելում էր իր աշխատանքի պատուղը, երբ կամաւ մի հարուածով ինքն իրան խլեց հանգստից և աշխատանքից, որ նա սիրում էր, կեանքի և անխառն ուրախութիւններից: Մի զագաղի վրայ պէտք է արտասանել խորիմաստ և մաքուր բառեր, պէտք է արտայայտել մեղմութիւն և համերաշխութիւն: Բայց դուք գիտէք, պարոններ, որ միայն արդարադատութեան և ճշմարտութեան մէջ է հանգիստը: Ես չեմ խօսում փիլիսոփայական ճշմարտութիւնից, որ մեր յաւիտենական վէճերի առարկան է, այլ այն բարոյական ճշմարտութիւնից, որ մենք ամենքս կարող ենք ըմբռնել, որովհետեւ նա յարաբերական է, զգալի, համապատասխան մեր բնութեանը և այնքան մօտիկ մեզ, որ նոյն-իսկ մի երեխայ կարող է այն շօչափել... Արդարութեան և ճշմարտութեան համար սկսած պայքարը յիշելով կարող եմ ես լոել մի անմեղի կորուսը խնդրող այն մարդկանց մասին, որոնք նրա փրկութեան մէջ իրանց կորուստն զգալով՝ երկիւղի յուսահատութեամբ նրան նեղում էին... կարող եմ լուսութեան տալ նրանց ստերը, սա կը լինէր լուսութեան տալ նրա (Զօլայի) առաքինութիւնը կարող եմ ես լուսութեան տալ նրանց լուսանքը, նրանց վիրաւորանքները. սա կը լինէր լուսութեան տալ նրա (Զօլայի) ստացած վարձատրութիւնը և պատիւները: կարող եմ ես լուսութեան տալ նրանց ամօթը, դա կը լինէր լուսութեան տալ նրա փառքը: Ոչ, ես կը խօսեմ»: Ապա հակիրճ կերպով նկարագրելով Զօլայի կեանքի վերջին տարիներին կա-

պուած խոշոր հասարակական գեղակրը. Առաջար շարժուակամք է. և Այդ նենազար որերում շատ բարի քաղաքացիներ էլ հաւատ չանձեն զեղի հայրենիքի փրկութիւնը. զեղի Ֆրանսիայի բարոյական ոյժը... Մէջ, ներկայ բևերին մի կոտազի հակառակորդ, մի անհաջ ընկերագույնական առում էր զանութեամբ՝ «Եթէ այս աստիճան ապահովուած է ներկայ հասարակութիւնը, ապա նրա զարշելի բնկորները չեն կորող նոյն իրական հաւայի հիմանը, մի նոր հասարակութեամս Արդարութիւն, պատրի, միաք, ամեն ինչ թւռմ էր կորած»:

Եւ ամեն Բնշ փրկուեց Զօլան միայն մի զատական սիած չէր, որ նոյն առեց, նոր բացեց զաւացրութիւնը բանութեան, մնալունիքի, բոլոր այս սյամերի, որոնք միարանուած էին սպանելու Ֆրանսիայում հասարակական արդարազատութիւնը, հանրապետական իդէան և ազատ միաբը, իր արի ձայնը արթնացնեց Ֆրանսիան նրա արածի հետեւանդներն անհայի նու.

Նրանք, այդ հետեւանդները, այսօր յեղյեղուում են մի նզօր փառանեղութեամբ և ուժով, նրանք տարածուած են անմիջը, և առաջ են բերել հասարակական արդարութեան մի շարժում, որ էլ չի կանգնի նրանից կը ճնուի իրերի մի նոր կարգ հաստատուած աւելի լաւ արդարազատութեան և ամենքի իրաւունքի աւելի խորը գիտակցութեան վրայ:

...Չը խղձանք նրան իր կրած տանշանդների համար... Նախանձնեք նրան, որովհետեւ նա պատի բերեց իր հայրենիքին մի հսկայական զօրծով, մի մեծ զործողութեամբ, նախանձնենք նրան, իր ճակատազիրը և իր սիրութ նրան պատրաստեցին ամենամեծ բազզը, նա եղաւ մի արձան մարդկային խղձի:

Անառօլ Ֆրանսը իր այս խօսքերով ամրող Ֆրանսիայի լաւագոյն մաքերի և սրտերի թարգման հանդիսացաւ. Եւ, երբ մարդ մտածում է, որ այս բոլորը վերաբերում են այն մորդուն, որին մի քանի տարի առաջ համարեաւ ամրող Պարիզը, ամրող Ֆրանսիան ման էր աղաղակում. ակամայ բանուում է մի սրբազն հիացմունքով զեղի ծշմարտութիւնը և հաւատով զեղի նրա գերազոյն յաղթանակը. Կեանքի զարշութիւնների, խեղդող իրականութեան մէջ ամեն աեղ և ամեն ժամանակ այդ հաւատը այնպէս սփռիիչ է, որ միայն նրա համար Զօլան արժանի է տառապող մարդկութեան խորին երախտագիտութեանը: